ԱՄՄԱՊԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/3

Արձանագրություն N 3
ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արթիկ

05 փետրվարի 2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մանյակ Պապիկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Սվետլանա Երիցյան , Սոնա Աղաջանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Էդվարդ Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Մ. Պապիկյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Մերժված հայտերի մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
(Մ. Պապիկյան)

Ընդունել ի գիտություն, որ փետրվարի 04-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացության առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենի, բացառությամբ «ՅՈՒՆԻՄԵԴ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ Հ/Ձ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

ԱՄՄԱՊԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգին իրենց՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին

իրենց՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	Ընտրված մասնակիցներ ճանաչել՝	
1	Նատալի ֆարմ	6,10,11,12,13,14,33
2	Մարգ Ֆարմացիա ՍՊԸ	16,40
3	Խաչպար ՍՊԸ	19,34
4	ԼԵՅԿՈ	20,25,26,27,35,36,38,39
5	ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ՍՊԸ	23,52
6	Ֆարմեգուս ՍՊԸ	42,43,44,50,51
7	Թագ ՀԷՄ ՍՊԸ	46,49,54
8	Մեդտեխսերվիս ՍՊԸ	47,48
	Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	Խաչպար ՍՊԸ	10,20,23,38,39,47,48
2	ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ՍՊԸ	11,12,13
3	Նատալի ֆարմ	26,27,36
4	ԼԵՅԿՈ	33
5	Մարգ Ֆարմացիա ՍՊԸ	35,42,44
6	Դեզսերվիս ՍՊԸ	43
7	Ֆարմեգուս ՍՊԸ	49
8	Մեդտեխսերվիս ՍՊԸ	52

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Մ. Պապիկյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մերժված հայտերի մասին

(Մ. Պապիկյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՅՈՒՆԻՄԵԴ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ Հ/Ձ -ի հայտը :

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝

մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.<u>**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**</u>
(Մ. Պապիկյան)

«ԱՄՄԱՊԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/3 » ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում օրը <<Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն>> ՓԲԸ , Շիրակի մարզ ք.Արթիկ Բաղրամյան 11 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Մ. Պապիկյան

անդամներ՝ Ս. Երիցյան

Ս. Աղաջանյան

Քարտուղար՝ Է. Գրիգորյան

ProTender©
www.protender.am